ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 1

ԵՊՀ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

31 օգոստոսի 2021թ.

Նախագահ Մ.Ա.Զաքարյան

Քարտուղար Ք.Վ.Օթարյան

Ներկա էին խորհրդի 11 անդամներից 9 անդամները։

Նիստի օրակարգը ներկայացրեց Մ. Զաքարյանը։

ՕՐԱԿԱՐԳ

1. Ֆակուլտետի գիտական խորհրդի կազմի քննարկում և հաստատում:
2. Ուսումնական գործընթացի կազմակերպում:
3. Ֆակուլտետի 2021-22 ուս. տարվա առաջին կիսամյակի անվանական կրթաթոշակների հավակնորդ ուսանողների թեկնածության քննարկում:

Ֆակուլտետի խորհրդի նիստը բացեց և օրակարգը ներկայացրեց ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար, գիտ.խորհրդի նախագահ Մ.Ա.Զաքարյան:

Բաց քվեարկությամբ 9 կողմ 0 դեմ, 0 ձեռնպահ համամասնությամբ որոշվեց

Որոշում՝ 1/1

Հաստատել նիստի օրակարգը։

Օրակարգի 1 «Ֆակուլտետի գիտական խորհրդի կազմի քննարկում և հաստատում» հարցի վերաբերյալ Մ.Զաքարյանը ներկայացրեց, որ գիտական խորհրդի կազմում տեղի է ունենալու փոփոխություն։ Արտաքին շահակից Կիմ Սարոյանը զբաղվածության պատճառով չի կարող մասնակցել գիտ.խորհրդի նիստերին, հետևաբար նրան պետք է փոխարի նոր արտաքին շահակից։ Կատարվեց մտքերի փոխանակում տարբեր թեկնածությունների շուրջ։

Ուսանողների կազմում ևս տեղի է ունենալու փոփոխություն։ ՈՒԽ և ՈՒԳ նախագահների նոր ընտրությունները տեղի է ունենալու մինչև սեպտեմբերի 20, հետևաբար առաջարկ եղավ նոր կազմը հաստատել 2-րդ նիստին։

Բաց քվեարկությամբ՝ 9 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, որոշվց

ՈՐՈՇՈՒՄ 1.1

Գիտ.խորհրդի կազմը հաստատել 2-րդ նիստի ընթացքում:

Օրակարգի 2 «Ուսումնական գործընթացի կազմակերպում» հարցի վերաբերյալ Մ.Զաքարյանի հաղորդումը հետևյալն է.

Դասերի 97% անցկացվելու է OffLine:

Դասերը կսկսվեն 9^{15}, դասի տևողությունը՝ 2x40 րոպե, 5 րոպե ընդմիջելով յուրաքանչյուր 40 րոպեից հետո: Մեկ մուտքից հետո 10 րոպե դասամիջոց: Երկար դասմիջոցի տևողությունը 30ր՝ 12^{15}-12^{45} : Դասացուցակը կազմված է հնգօրյա աշխատանքային գործընթացով:

Ծրագրավորման և ինֆորմացիոն տեխնոլոգիաների դասախոսական կազմը համալրվել է երկու նոր անդամներով՝ ֆ.մ.գ.թ.,ասիստենտ, Նարինե Դավթյան և ֆ.մ.գ.թ., դոցենտ Գարեգին Սարգսյան:

Ուրբաթ և շաբաթ օրերին դասացուցակի խիտ լինելու պատճառով OnLine դասեր կպարապեն Ջանիբեկ Սրապիոնյանը 4-րդ կուրսում ֆինանսական մաթեմատիկա առարկան իսկ Ռուբիկ Դալլաքյանը Մաթ. անալիզ 3 առարկան 2-րդ կուրսում: ZOOM հարթակով դասերի ժամանակ ուսանողները հաճախելու են համալսարան, հսկողությունը իրականացվելու է դեկանատի կողմից, դասախոսներին և ուսանողներին կտրվեն ZOOM լինքեր:

Քանի որ դեռևս համաճարակի վտանգը պահպանվում է, ապա դիմակների կրումը դառնում է պարտադիր:

Բաց քվեարկությամբ՝ 9 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, որոշվց.

ՈՐՈՇՈՒՄ 1.2

Ընդունել ի գիտություն:

Օրակարգի 3 «Ֆակուլտետի 2020-2021ուս. տարվա երկրորդ կիսամյակի անվանական կրթաթոշակների հավակնորդ ուսանողների թեկնածության քննարկում» հարցի վերաբերյալ Մ.Զաքարյանի հաղորդումը:

Մ.Զաքարյանը նշեց, որ Բնական գիտությունների ֆակուլտետի «Ինֆորմատիկա (համակարգչային գիտություն)» մասնագիտության Ինֆորմատիկա և

կիրառական մաթեմատիկա» բակալավրի կրթական ծրագրի անվճար ուսուցման համակարգի երրորդ կուրսի ուսանողուհիներ Մարիամ Արմանի Ղազումյանը երկու կիսամյակ, Հասմիկ Լևոնի Ստեփանյանը չորս կիսամյակ, Երկրորդ կուրսի ուսանողուհի Իննա Հրայրի Հարությունյանը երկու կիսամյակ անընդմեջ սովորում են գերազանց:

Մ.Զաքարյանը առաջարկեց Իննա Հարությունյանին ներկայացնել «ՎԱԶԳԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ» Մարիամ Ղազումյանին «ՄՈՆԹԵ ՄԵԼՔՈՆՅԱՆ», իսկ Հասմիկ Ստեփանյանին «ՀԱՄԼԵՏ ԿԱՐԱՅԱՆ» անվանական կրթաթոշակների:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - «Ծրագրավորման և ինֆորմացիոն տեխնոլոգիաների» ամբիոնի վարիչի ԺՊ, տեխ.գ.թ., դոցենտ, կրթական ծրագրի ղեկավար Ա.Հովակիմյանը ներկայացրեց, որ Հասմիկ Ստեփանյանը, Մարիամ Ղազումյանը, Իննա Հարությունյանը աշխատասեր, ակտիվ, պատասխանատու ուսանողներ են, գտնում է, որ արժանի են անվանական կրթաթոշակ ստանալուն:

Բաց քվեարկությամբ՝ 9 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, որոշվց

ՈՐՈՇՈՒՄ 1.3

Երաշխավորել և ներկայացնելել «ՀԱՄԼԵՏ ԿԱՐԱՅԱՆ» անվանական կրթաթոշակի Հասմիկ Ստեփանյանին, «Մոնթե Մելքոնյան» անվանական կրթաթոշակի Մարիամ Ղազումյանին «ՎԱԶԳԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ» անվանական կրթաթոշակի Իննա Հարությունյանին և ներկայացնել մասնաճյուղի գիտական խորհրդի հաստատմանը:

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ_____ Մ.Ա. ԶԱՔԱՐՅԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ_____Ք.Վ.ՕԹԱՐՅԱՆ